

\*\*\*

Տակաւին վերջերս, անսովոր երեւոյթ մը պարզուեցաւ Երեւանի մէջ, որ ջերմօրէն ոգեւորիչ է: Աւելի քան 70,000 հայերու ստորագրութեամբ դիմումնագիր մը ղրկուեցաւ Մոսկուա, կեդրոնական կառավարութեան: Այդ նշանակելի հանրագրութիւնը կ'առաջարկէր, որ Նախիջևանը, իրբեւ պատմականօրէն հայկական հողամաս վերամիաւորուի Հայաստանին: Յայտնօրէն, այս արարքը արդիւնքն էր Խորհրդային Միութեան ղեկավար Միխայիլ Կորպաչովի հռչակած ազատութեան նոր միջնորոտին ու գործելակերպին:

Կը վերջիւնէ հիմա, այդ բացառիկ քայլին կապակցութեամբ: Աւելի քան քառորդ դար առաջ էր, երբ կը վարէի ՌԱԿի Պոստոնի օրաթերթին «Պայքար»-ի խմբագրութիւնը: Այն շրջանին, թերթին մէջ հրատարակեցի խորհրդային արդարադատութիւն նիւթին նուիրուած խմբագրական մը: Հոն գնահատանքով կ'արձանագրէի, թէ ԽՄԻութիւնը պաշտպան կը հանդիսանար նորագոյն ազգերու եւ ցեղերու իրաւունքներուն, անոնց մղած մաքառումներուն մէջ, որ իրենց հայրենի հողերուն վրայ կազմեն սեփական ինքնավար պետութիւն: Մոսկուա նաեւ իր նիւթական օժանդակութեամբ ու բարերար հեղինակութեամբ թիկունք կը կանգնէր անոնց, սը իրբեւ իրաւագրկուած ու ճնշուած ժողովուրդներ՝ արդարամիտ ու աղատասէր գործելակերպին շնորհաւորած իրենց երկիրներուն մէջ: Եւ իր այդ արդարամիտ ու ազատասէր գործելակերպին շնորհիւ՝ Խորհրդային Միութիւնը ջերմ համակրանքը վաստակած էր Երբորդ Աշխարհի նոր դարագոյն, կարօտեալ ժողովուրդներուն:

Այդ մեկնակէտէն կը յանգէի հայոց դոյալիտեան: Պատմական անդրադարձով կը յիշէի թէ հայոց ազգը երկար դարերով եղած էր ամէնէն աւելի հալածուած, իրաւագրկուած, կողոպտուած ու ջարդուած ժողովուրդը, Պարսկաստանի, մանաւանդ Թուրքիոյ ջարդարար լուծերուն տակ: Բարբախտութիւն մը եղած էր, որ Ռուսիա, շուրջ 150 տարիներ առաջ, Պարսկաստանի դէմ մղած պատերազմին իրբեւ արդիւնք՝ անկէ ազատագրած էր Երեւանի նահանգը, եւ անոր վրայ 1920ի Նոյեմբերին հիմնուեցաւ ներկայ Խորհրդային Հայաստանը, ուր խաղաղօրէն, ազատօրէն կ'աճի ու կը յառաջդիմէ հայութիւնը:

Բայց անոր ապահով սահմաններէն դուրս հողմացրիւ կ'ապրին մօտ երեք միլիոն հայեր, մեծագոյն մասով տարադիր, ենթակայ քաղաքացիական աղէտներուն, ազգային կաշկանդումներու, զրկանքներու, Անցեալ տասնամեակներուն, աւելի քան 200,000 դաղթական հայեր տարբեր երկիրներէ ներգաղթեցին Հայաստան եւ իրենց աշխատանքով, արհեստներով եւ տաղանդով նշանակելի նպաստներ բնծայեցին իրենց մայր հայրենիքին գիտութեան, ճարտարութեան, մշակոյթի բոլոր մարզերուն զարգացման: Անոնց համրանքը, իրենց զուսկներով ու թոռներով հիմա կը հասնի 500,000ի: Բայց Հայաստանի ներկայ տարածութիւնը շատ սահմանափակ է եւ մանաւանդ լեռնային: Անոր բնակչութիւնը չի կրնար հայրենադարձով ու ներքին աճումով բազմանալու բաւարար հող ունենալ: Անկասկած նախընտրելի պիտի ըլլար, որ սփիւռքահայոց հայրենի հողամասերը, որոնք բռնագրաւուած կը մնան Թուրքիոյ կողմէ, ազատուելով միացուէին ներկայ Խորհրդային Հայաստանին եւ դարձեալ հնարաւոր դառնայ, որ հարկէր հազարաւոր կարենան ներգաղթել ու հաստատուել իրենց պայմանական երկիրին մէջ: Բայց այդ բախտաւոր լուծումը կապուած է միջազգային նպաստաւոր պայմաններու, որոնք պիտի ստեղծուին յետագային:

Սակայն կայ ներկայ ու կարելի լուծում մը, Խորհրդային Միութեան ծիրէն ներս եւ անոր բացարձակ իրաւասութեան տակ: Ատիկա՝ Ղարաբաղի եւ Նախիջևանի պատմականօրէն հայկական հողամասերուն միացումն է Հայաստանի խորհրդային հանրապետութեան, որոնց շնորհիւ հնարաւոր պիտի դառնայ հայ բնակչութեան աւելի արագ բազմացումը եւ ընդհանուր զարգացումը: Երկու մարզերը վարչականօրէն ենթակայ կը մնան Ատրպէյճանին, որ առանց անոնց ալ արդէն հողային ընդարձակ տարածութիւն ունի: Այսպիսի արդար հատուցումով մը՝ Մոսկուայի կառավարութիւնը գործնական ապացոյց մը պիտի տայ ամբողջ մարդկութեան, թէ Խորհրդային Միութիւնը իր ներքին սահմանային սըրբազրումները կը կատարէր խաղաղ համաձայնութեամբ, առանց դառն վէճերու եւ բախումներու, իր արդարադատ իրաւարարութեամբ:

Այդ խմբագրականը թարգմանեցինք անգլերէնի եւ բացատրական նամակով մը անոր օրինակները ապահովագրուած ղրկեցինք Մոսկուա, օրուան վարչապետին, նաեւ Միացեալ Ազգերու մէջ Խորհրդային պատուիրակին եւ անոնց Ուաշինկթընի դեսպանին: Նոյն տարիներուն, այդ հարցին շուրջ զրոյցներ ունեցեր եմ Խորհրդային տարբեր հիւպատոսներու հետ:

Հիմա, միջազգային յարաբերութիւնները նկատելի բարեշրջում կրած են եւ երկու հօրագոյն, մրցակից պետութեանց ղեկավարները, իրենց անձնական հանդիպումներուն եւ հրապարակային տարակարծութեան մէջ՝ զիրար վիրաւորող մեղադրանքներ չեն նետեր իրարու:

Եւ ինչ որ մեծապէս ոգեւորիչ է հայութեան համար՝ Միփայիլ Կորպաչովի ազատաշունչ առաջնորդութեան շնորհիւ ստեղծուած է լարենշրջութեան վերանորոգ միջնորոտ մը Խորհրդային Միութեան եւ Հայաստանի մէջ:

Այդ մտայնութեան բարերար արդիւնքով՝ խորհրդահայ մտաւորականներ սկսած են հանրաքուէներ հաւաքել ու ղրկել Մոսկուա, կեդրոնական կառավարութեան, առաջարկելով որ Ղարաբաղի եւ Նախիջևանի հայկական նահանգները, որոնք արդէն ինքնավար մարզեր են վարչականօրէն կապուած Ատրպէյճանին՝ դարձեալ վերամիացուին Հայաստանին, որուն մաս կազմած էին անցեալին:

Հայրենի ժողովուրդին այս շարժումին պէտք է մասնակից դառնայ նաեւ սփիւռքի հայութիւնը: Եւ իր կազմակերպուած փափաքը արտայայտէ Խորհրդային Միութեան վարիչներուն, անոնց Ուաշինկթընի դեսպանատան միջոցով, դրաւոր կամ անձնական զրոյցներով: Բայց այդ դիմումները որպէսզի իմաստ ու արժէք ունենան՝ պէտք է կատարուին քաջաճ, կամայական, ինքնալուծի ձեռնարկներով, որոնք աւելի շիտթութիւն ու վարանում պիտի ստեղծեն: Այդ ջանքերը պէտք է թափուին արտասահմանի ամբողջ հայութեան անունով եւ զայն պաշտօնապէս ներկայացնող համազարդութային մարմինի մը կողմէ, որ Սփիւռքահայ Ազգային Պատուիրակութիւնը կրնայ ըլլալ: Առանց այդպիսի կեդրոնական հեղինակութեան մը դերին՝ մեր ցոյցերը, զոհողութիւնները, յուշակներն ու մաքառումները պիտի շարունակեն մնալ տարադիւրեւ, անկապակից պատահական շարժումներ, նուազազոյն արդիւնքի մակարդակի վրայ: Եւ մենք կը շարունակենք յամառիլ երկու ափսոսալի մեղանշումներու մէջ:

— Կը յուսանք, կը պահանջենք, որ օտար պետական ղեկավարներ ու հանրային առաջնորդներ՝ նոյնիսկ իրենց երկիրներուն քաղաքական շահերուն դէմ՝ Թուրքիայէն կորցնելու եւ հայոց պարգեւեն արեւմտահայ հողերը, արծաթէ սփիւռքի մը վրայ, արդարութեամբ սիրոյն:

— Մինչ մենք, այդ դատին պահանջատէրերը, չենք ուզեր, չենք փորձել անգամ, անոր նուիրական ահազանութեան տակ թաղել հատուածական եղկելի յաւակնութիւններ, մեծամոլութեան ունայնամիտ ցնորքներ, անձնական ճշգրտում, յանցաւոր փառասիրութիւններ եւ միասնանալ, պողպատուիլ մէկ կամքի, մէկ նպատակի, մէկ գործելակերպի, մէկ երազի՝ մէջ, եւ ծրագրել, զոհարել, մաքառիլ շատ շարժարուած հայկական դատին մարմնացումը հետապնդելու համար:

— Այլապէս՝ առանց մեր կողմէ այդ տարրական, այդ կենսական նախաքայլին, մենք կը կորսնցնենք հայոց հողային պահանջներուն հանդէպ օտար պետութեանց ու միջազգային խղճմտանքին վերաբերմունքը դատելու, զանոնք մեղադրելու եւ անոնցմէ արդար հատուցում տրուելու ամէն իրաւունք...:

8 Նոյեմբեր, Լոս Անջելոս

\*\*\*

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ղարաբաղի եւ Նախիջևանի հողամասերը անոնց պատմական իրաւատիրոջ, Հայաստանին վերադարձնելու ներկայ դիմումներուն մէջ անհրաժեշտ է անդրադառնալ, թէ անոնց միացման հարցը արդէն արծարծուած եւ լուծուած է եղեր տակաւին 1920-21ի շրջանին, Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան ծնունդին սկզբնական օրերուն: Գոյութիւն ունին 3 պաշտօնական փաստաթուղթեր որոնք անփխտելի ապացոյցներ են այդ իրողութեան, եւ անոնց բնագիրները կը պահուին Երեւանի պետական պատմագիտական թանգարանին արխիւներուն մէջ:

Անոնց առաջինը տպուած է 1920ի Դեկտեմբեր 3ին, Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուի «Կոմունիստ» պաշտօնաթերթին թիւ 164ին մէջ,